Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒՆ N 1

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ հաշվիչ հանձնաժողովի նիստի

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՐՏԱՀԵՐԹ ԺՈՂՈՎԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան 09 հունվարի 2025թ.

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ /այսուհետ՝ Բանկ/ բաժնետերերի հեռակա քվեարկությամբ արտահերթ ժողովի քվեարկությունը կատարվել է քվեաթերթիկներով («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք, հոդված 79): Քվեաթերթիկները, համաձայն Բանկի Խորհրդի թիվ 21/05-24.09.24թ. որոշման, տրամադրվել /առաքվել/ են բաժնետերերին մինչև 2024թ. դեկտեմբերի 10-ը: Քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ հաշվի են առնվել ժողովի անցկացման օրվա դրությամբ վերադարձված քվեաթերթիկներով տրամադրված ձայները:

Քվեաթերթիկների ամփոփման արդյունքները հետևյալն են՝

Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի ձայների գումարային քանակը կազմում է 12,119,719 ձայնի իրավունք տվող բաժնետոմս, որից քվեարկությանը մասնակցել են 9,593,660 ձայնի իրավունք տվող բաժնետոմս կամ բաժնետոմսերի ընդհանուր թվաքանակի 79.16%-ը: Քվեարկությանը մասնակցած քվեաթերթիկներից անվավեր է ճանաչվել 6 քվեաթերթիկ 1,483 ձայնի իրավունքով՝ քվեարկության կանոնները խախտելու պատճառով:

Քվորումը ապահովված է:

Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի քվեարկությանն էին դրված հետևյալ հարցերը՝

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բանկի բաժնետերերի հեռակա քվեարկությամբ արտահերթ ժողովի հաշվիչ հանձնաժողովի մասին:
2. Բանկի Խորհրդի անդամ Ռ. Հայրապետյանի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ:
3. Բանկի Խորհրդի քանակական կազմի հաստատման վերաբերյալ:

Քվեարկությանը մասնակցած բաժնետերերի ձայները, ըստ օրակարգի հարցի, բաշխվել են հետևյալ կերպ.

1. Առաջին հարց	կողմ	9,592,177 ձայն կամ մասնակիցների ձայների	99.985%
	դեմ	0 ձայն կամ մասնակիցների ձայների	0%
	ձեռնպահ	0 ձայն կամ մասնակիցների ձայների	0%
	անվավեր	1,483 ձայն կամ մասնակիցների ձայների	0.015%
2. Երկրորդ հարց	կողմ	9,592,027 ձայն կամ մասնակիցների ձայների	99.983%
	դեմ	0 ձայն կամ մասնակիցների ձայների	0%
	ձեռնպահ	150 ձայն կամ մասնակիցների ձայների	0.002%
	անվավեր	1,483 ձայն կամ մասնակիցների ձայների	0.015%

2. Երրորդ հարց	կողմ	9,592,177 ձայն կամ մասնակիցների ձայների	99.985%
	դեմ	0 ձայն կամ մասնակիցների ձայների	0%
	ձեռնպահ	0 ձայն կամ մասնակիցների ձայների	0%
	անվավեր	1,483 ձայն կամ մասնակիցների ձայների	0.015%

ԺՈՂՈՎԸ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել բանկի բաժնետերերի հեռակա քվեարկությամբ արտահերթ ժողովի հաշվիչ հանձնաժողովը մեկ տարվա լիազորությունների ժամկետով, հետևյալ կազմով.
Նախագահ՝ Ա. Խաչատրյան
Անդամներ՝ Ա. Աղամյան, Ե. Ալեքսանյան

2. Հավանություն տալ Բանկի Խորհրդի անդամ Ռ. Հայրապետյանի լիազորությունների վաղաժամկետ դադարեցմանը:

3. Հաստատել Բանկի Խորհրդի քանակական կազմը՝ բաղկացած 6 անդամներից /քվեարկությամբ ընտրված՝ 5 անդամ և առանց ժողովի քվեարկության ներառված փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի ներկայացուցիչ/:

Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի հաշվիչ հանձնաժողով.

նախագահ՝ Ա. Խաչատրյան

անդամներ՝ Ա. Աղամյան

Ե. Ալեքսանյան